

### ՆՈՐԱԳԻԻՏ ԷՋԵՐ

## ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԻՏ

Նոր-Ջուլայի Ամենափրկչեան վանքի տաճարի եւ խօջա վեկիջանենց, Սուբոտեանենց ու Լիւորենց պատմական ապարանքների գեղարուեստական որմնանկարներն ուսումնասիրելուց յետոյ՝ մեր քայլերն ուղղում ենք արուարձանի Դարէժ թաղը, ուր դեռ կանգուն է 17րդ դարում կառուցուած խօջայական մի այլ ապարանք, որի հիմնական երկու սենեակների պատերը զարդարուած են սեֆիվեան շրջանի նկարուձեւան թանկագին նմուշներով, որոնք մինչեւ օրս էլ դեռ չեն ուսումնասիրուել եւ մնացել են անյայտութեան մէջ:

Այդ չնչին այժմ Բարսեղեանց ազգատոհմի սեփականութիւնն է: Դա պատմական այն ապարանքներից մէկն է, ուր Ծան-Արքաս էլ: Բորդն Սպահանից երբեմն հիւր է եկել Նոր - Ջուլա հայ խօջային եւ այդ առիթով էլ կազմակերպուել են ճոխ խնջոյքներ: Նոյնպէս այդ ապարանքումն է, որ Ռօջան հիւրասիրել է Իրանում ապրող Եւրոպացիներից շատերին:

Թէ Նոր-Ջուլայից ո՞ր տոհմը կառուցել եւ նկարազարդել է տունը այդ ապարանքը, դժուարանում ենք որոշ եւ դրական կարծիք յայտնել, որովհետեւ, հակառակ մեր յամառ հետազոտութեանց, ո՛չ Նոր-Ջուլայի պատմութեան մէջ, ո՛չ ժողովրդի շրթների վրայ եւ ո՛չ էլ ձեռագիր մատեաններում չկարողացանք գտնել փաստական աղբիւրներ: Միայն ապարանքի նրկարազարդ առաջին սենեակի ձախ պատի երկրորդ դռնակում գծուած նկարը պատկերում / մի հայ խօջա, որի ձօտ դրուած քայ մասեանում գրուած է. «Յիւտսի ծառայ Սուլթան»:

Թերեւս Նոր-Ջուլայիցի այդ Ռօջան է ապարանքի տէրը, որ գեղեցիկ որմնանկարներով զար-

դարել է տունը իր բնակարանը:

Թէ այդ գեղարուեստական որմնանկարներն ու ոսկեգոծ զարդանկարներն իսկապէս ո՞ր մեծատաղանդ նկարչի վրձինին են պատկանում, չունենք, դժբախտաբար, որ եւ է՛րբաւոր յիշատակութիւն, որի վրայ հիմնուելով կարողանանք պարզել մեզ հետաքրքրող կտիւն հարցեր: Միայն որմնանկարների ոճից, հայերէն տառերից եւ, վերջապէս, ժամանակաշրջանից կարելի է հետեւցնել, որ դրանք, Խրեւս, վարպետ Մինասի ստեղծագործութիւններն են:

Սեֆիվեան որմնանկարչութեան այդ լաւագոյն մնացորդները գրաւուած են ձեր ուշադրութիւնը ոչ միայն իրենց բնորոշ բովանդակութեամբ, այլ եւ բարձրագոյն գոյնի սքանչելի ներդաշնակութեամբ: Այնտեղ գերիշխողը պլաւաւորապէս իրապաշտ արուեստն է, ուր ներկարիչն արտայայտել է ո՛չ միայն իր մտորումներն ու ապրումները, այլ եւ արուեստագէտի նուրբ շնչով պատկերել է Ծան-Արքաս երկրորդը եւ նրա պատմաշրջանում ապրող ժողովրդի վերին խաւի ցայտուն տիպերը:

Նկատողութեան արժանի է նաեւ այն, որ 17րդ դարի այդ դիմանկարների ու խմբանկարների մէջ տեսնում էք երկու տարբեր աշխարհ: Դրանցից առաջինը զուտ իրանեան է եւ միմիայն իրանական տեսարաններ ու անձեր է պատկերում, իսկ երկրորդը կարելի է անուանել արևմտեան: Նկարիչը մանրամասնօրէն ու թումնասիրել է իր ժամանակի ու միջավայրի տարրեր տիպարները, նրանց հազուստները, շարժումները, սովորութիւնները եւ վրձինել է իրենց ուրոյն առանձնայատկութիւններով: Չա-



Խօյտ Սուլթան

Նոր-Ձուղայի որմնակարներից, 17րդ դար

վաղանց խօսուհն եւ կենդանի են նկարուած մա-  
նաւանդ դէմքերը, որոնցից իւրաքանչիւրն յայտ-  
նաբերում է նրա յատկանշական գծերով  
դէմքեր պատկերելու մեծ ձիրքը: Բայց նա ու-  
նեցել է ո՛չ միայն դէմքեր գծադրելու խոշոր  
տուեալներ, այլ եւ տիպիկ հոգեկան ապրում-  
ները, նրանց ներքին յոյզերն ու մտորում -  
ները հարազատօրէն դրսևորելու մի առանձին  
յատկութիւն: Այնտեղ են պատմաշրջանի նաղա-  
նի Իրանուհիներն՝ իրենց ուրոյն դիմազծերով:  
Նրանց մօտ են ժամանակի իշխանները: Այնտեղ  
են նաև Նոր-Ձուղայեցի խօջաններն ու հայ կի-  
նը: Արեւելեան տիպերի հետ վրձինուած են նա-  
և դարաշրջանի Իրանում ապրող Եւրոպացի-  
ները: Գրաւիչ են մանաւանդ օրիորդներն ու  
կանայք: Արեւելքի ու արեւմուտքի այդ սքան-  
չելի զուգադրութիւնը նկարիչն արտայայտել է

զարմանալի հմտութեամբ եւ վարպետ վրձի-  
նով: Այդ երեսոյթն է՛լ աւելի բարձրացնում է  
որմնանկարների գեղարուեստական արժէքը:

Նկարներին առանձին երանգ են տալիս նա-  
և պատմաշրջանի տիպիկ տարազները եւ կեն-  
ցաղի ընտրոյ գծերը, որոնց նկարիչը նկարել  
է ազգադրապէտի ճարտար վրձինով: Գրանով  
էլ պիտի բացատրել, որ որմնանկարներն ունեն  
ո՛չ միայն գեղարուեստական, այլ եւ ազգադրա-  
կան-կենցաղային խոշոր արժէք:

Որմնանկարների էական յատկանիշներից  
մէկն էլ հարուստ ընտելիւնն է եւ մանաւանդ  
բանաստեղծական շունչն ու գինամիկան: Նկար-  
ներն ասես խօսում են ձեզ հետ, պատմում ժա-  
մանակաշրջանի բարձր դասի հոգեկան կեան-  
քի, անյայտացած ուրոյն կենցաղի, տարազի եւ  
երաժշտութեան մասին: Այլ հիմնական բոլոր

երևոյթները նկարուած են խայտարկէտ զոյ-  
ների ու գծերի ա՛յնպիսի սքանչելի ներգաշնա-  
կութեանը եւ վարպետութեամբ, որ սենեակում  
զուք տանում էք արուեստի երկու տարբեր  
զարոց եւ տէինիկա: Դրանցից առաջինը սե-  
ֆէվեան նկարչութեան գեղեցկութիւնն ու խո-  
րութիւնն է, իսկ երկրորդը իտալական Վերա-  
ծնութեան շէտն ու կնիքը, որ առանձնապէս  
նկատելի է եւրոպական նկարներէ վրայ:

Այստեղ էլ, դժբախտաբար, ժամանակը եւ  
մարդկային տպաւորութիւնը գործել են իրենց  
անբարեխիղճ աւերումները: Առաջին սենեակի  
պատերի ներքեւում գծուած որսորդական ան-  
երման պատկերներն ու արժէքաւոր զարդանը-  
կարները հետագայում ծածկել են սպիտակ ծե-  
փով եւ 17րդ դարի սեֆէվեան արուեստի շատ  
թանկագին էջեր միանգամայն աւերել են ու  
ոչնչացրել: Այդ տխուր երևոյթի վրայ աւելա-  
ցընենք եւ ա՛յն, որ այժմ երկրորդ սենեակում  
վարձով քնակուող գիւղացիները ոսկեգոծ ման-  
րանկարների ու ծաղկանկարների վրայ մեխել  
են իրենց ընտանեկան լուսանկարները եւ վնա-  
սել գեղարուեստական արժէք ներկայացնող ու-  
րոշ որմնանկարներ:

Այս ընդհանուր բնորոշումներից յետոյ,  
տանք ապարանքի հիմնական սենեակի վերելի  
դռնակներում աւերումից զերծ մնացած մեծա-  
դիր որմնանկարների նկարագրութիւնը:

Տան - Արքա երկրորդը նար-Ջուլպայում:—  
Արուեստագէտի վրձինով գծուած գեղարուես-  
տական մի նուրբ որմնանկար է դա: Պատմա-  
կան Իրանի մեծ պրքան ծալլապատիկ նստած  
հայ խօջայի ապարանքում, ապրում է արեւել-  
եան դիւթիչ երաժշտութեան գունագեղ երանգ-  
ների աշխարհում: Տիպիկ է Շահի պարզ, բայց  
նուրբ հագուստը եւ մանաւանդ գլխի շալման:  
Նկարը նշում է Շահ-Աբբասի Ջուղահայերի  
հանդէպ ցոյց տուած սիրալիք վերաբերուձքը,  
կէր նա երբեմն հիւր է եկել հայ խոջաների ա-  
պարանքը:

Շահի ձախ կողմը ծալպատիկ նստել է  
քեամանչխաւը. նա գուլբը քիչ թեքել է նուրբ  
մասներով բռնած աղեղով քեամանչի լարերի  
վրայ հնչեցնում է արեւելեան յիրիկ երաժշտու-

թիւնը: Աես նա ամրոզջ էութեամբ ձուլուել է  
իր նուագարանի լարերի հետ:

Երաժշտի մօտ կանգնած գեղեցկուհին դի-  
նու փոքրիկ բաժակը մատուցում է հոգեկան  
բարձր տրամադրութեան ներքոյ ապրող Շա-  
հին, որի կապտոյ աչքերի մէջ եւ սէր կայ, եւ.  
մպխտ, եւ անսահման ուրախութիւն:

Գինի, կին, սէր եւ երաժշտութիւն — ահա  
Արեւելքի այն հիմնական մտտիւները, որ Իրա-  
նի հանճարեղ քերթողներից ոմանք քնարի լարե-  
րի վրայ երգել են ա՛յնքան խոր զգացմունքով  
եւ գեղարուեստական նրբութեամբ: Ահա տա-  
ղանդաւոր քերթող Օմար Յայեամի սիրերգնե-  
րից մի գողարիկ քառեակ.

«Այս կուժմ էլ ինձ պէս սիրող և եղած,  
կապուած ու գերի մի կոյսի մագին.  
Կանթը, որ ճըրա վրգին տեսնում ես,  
Մի քել է եղած սիրուհու վրգին:»

Իրանի յայտնի բանաստեղծներից Բարա  
Քահէրը եւս նոյն զգացմունքի խորութեամբ  
երգել է քնարական այսպիսի սիրուն էջեր.

«Դու որ ինձ հետ, սիրուհի՛ս,  
Ընկեր յինիլ չես ուզում,  
Ամէն գիշեր էլ ինչն՞ու  
Գայիս ես ինձ երազում:»

Ահա եւ Իրանցի տաղասաց Դադիի քնա-  
րից մի քառեակ.

«Մեռնում եմ ես այս ցաւից,  
Որ իմ մօտից գնացիր.  
Կողքիս Ցատիկ չուգեցար,  
Շիրմիս վրայ գէ՛թ նստիր:»

Կարդանք նաև Յայեամի գինուն նուիրած  
պարզ, բայց զգացմունքով լի երգը.

«Վայնի՛ր գինի,  
Քանգի չըգիտես  
Ո՛րկից եկար դու:  
Եւ ուրախ ապրի՛ր,  
Քանգի յայտնի չէ  
Ո՛ր ես գրնայու:»



Շահ-Աբրահա Բ. ք Նոր-Ջուղայում

Նոր-Ջուղայի որմնանկարներից, 17րդ դար

Ապա ո՞րքան յուզիչ է եւ պատկերաւոր նոյն բանաստեղծի սա ջառեակը .

«Անօթն իմ գինու, Տէ՛ր իմ, կտարեցիր, Դուռը ցնծուքեան գոցեցիր առ իս . Թափեցիր գինիս վարդի պէս կարմիր, Հարբած ես, Տէ՛ր իմ, հո՛ղը գայ թերնիս»\*) :

Սակայն, զինի, կին եւ սէր երգել են ո՛չ միայն Իրանի Հանճարեղ ջերթողներ, այլ և ժամանակի տաղանդաւոր նկարիչները : Ահա քնարական նման մի գեղեցիկ նկար է, որ արուեստագէտ նկարիչը պատկերել է ապարանքի պատի վրայ, ներդաշնակելով Արեւելէի հոգեկան ապրումների հետ : Այդ բնորոշ երեւոյթներն էլ որմնանկարին սուլիս են առանձին

զրաշուքիւն եւ բարձրացնում նրա պեղարուեստական արժէքը : Նկարում տիրապետում են մուգ – դեղին կարմրաւուն եւ բաց – մուգ սրճագոյն երանգները :

Խօսա Սուլթան : Աջ ձեռքին մի դրէչ բլուրնած, իսկ ձախը ծաղկաւուն զօտուն յննած, կանկնել է Նոր-Ջուղայեցի Իշխանը՝ խոհուն հայեացքով : Տիպիկ է նրա խօջայական տարադր : Նրա մօտ գրուած մուգ-կարմրաւուն ծածկոցով սեղանի վրայ բազմած բաց մատենուում, ինչպէս նշել ենք, գրուած է . «Յիսուսի ծառայ Սուլթան» : Թէ ի՞նչ են ներկայացնում գրասէր Ռօջայի կեանքի հիմնական դժեբը եւ թէ հասարակական տեսակէտից նա ի՞նչ դործունէութիւն է ունեցել, լուսարանութեան Համար մեր ձեռքի տակ չունենք փաստական տուեալներ : Միայն կարելի է ենթադրել, որ նա է ապարանքի տէրը : Տիրապետում են սպիտակ, սեւ ու կարմիր երանգները :

\*) Թարգմանութիւնը պատկամում է Յ . Միրզայեանին :

Ներպայցին: 17րդ դարում Իրանում ապրող մի նրբակազմ Ներպայցի է դա, որ կանգնած մենաւոր ծառի մօտ, նայում է խոհուն հայեացքով: Նրա ձախ ձեռքից կախուած է մի փոքրիկ գաւազան, իսկ ոտքերի մօտ հանգստանում է սիրուն շնիկը:

Սիրոյ հովուերգութիւն: Սիրոյ երջանիկ ապրումներ պատկերող քանաձտեղծական մի գեղեցիկ որմնանկար է դա: Նշածև աշբիրով, բարակ կամար յօնքերով եւ փոքրիկ բերանով շքեղ Իրանուհին թաւիչ մարգապետնի վրայ ծալպատիկ նստած, աջ ձեռքով բռնել է գինու փոքրիկ բաժակը եւ ձախով քնքշութեամբ առնում է իր մօտ նոյնպէս ծալպատիկ բազմած իշխանից հասուն եւ հիւթալից տանձր: Նրա աջ եւ ձախ ձեռքերի ճկոյթների վրայ փայլում են վառ կարմիր Փիրուզով զարգարուն ոսկէ մատանիները: Նրանց առջև գրուած արքայի մէջտեղում ժպտում է կէս կարուած կարմիր ձեռուկը, որի մէջ խրուած է սպիտակ


կոթով մի դանակ: Ձեռուկի երկու կողմերում գրուած փոքրիկ պնակների մէջ բազմած տանձերը, դեղձերը, նորարոյս վարունգները եւ նոները գրգռում են ձեր ախորժակը:

Ներպայցի կինը: Սեֆէյեան շրջանում Սպահանում ապրող եւրոպացի մի գեղեցիկուհի է դա, որին առանձին գրաւութիւն են տալիս արտայայտիչ աչքերը, մինչև ուսերն իջած վարսերը եւ մուգ-կարմիր փետրազարդ սեւ զլխարկը: Իշխում են սրճադոյն եւ մուգ-կարմիր երանգները:

Փնեղեցիկուհիների աշխարհում: Նուրբ վրձինով գծուած գեղարուեստական այս մեծագիր խմբանկարը պատկերում է Շահ-Աբրաս Երկրորդի պատմաշրջանում Իրանում ապրող մի խումբ եւրոպացի գեղեցիկուհիներ, որոնք կանանց եւ ծառայաբար պարտիզում, մի սեղանի շուրջ համախմբուած, վայելում են բնութեան բարիքները: Սեղանը զարդարուած է մրդերով: Կէս կարուած ձեռուկը, նուրբ, վարունգը,



Սիրոյ հովուերգութիւն  
Նար.Ջուղայի որմնանկարներից, 17րդ դար



Գեղեցկուհիների աշխարհում  
Նոր-Ջուզայի որմնակարներից, 17րդ դար

Հուլիսից դեղձը եւ կարմիր դինով լցուած չի-  
չը նկարուած են ա՛յնքան բնական եւ կենդանի,  
որ գրգռում են ձեք ախորժակը եւ դուք ան-  
պայման ուզում էք կարմիր ձմերուկի մէջ խըր-  
ուած սպիտակ կոթէ գանակով մի շերտ կարել  
եւ անուշ անել: Այդ հանդամանքներն էլ նշում  
են վարպետ նկարչի մատիւր.Սօրտ վրձիններու  
խոշոր ձիրքը: Բայց որմնակարում ձեր ուշա-  
դրութիւնը պաւում են եւրոպացի գեղուհի-  
ները, որոնք նայում են ձեզ իրենց նուրբ դի-  
մապծերով: Առանձնապէս պաւիչ է սեղանի  
ձախ ծայրում կանգնած չքնադաղէմ կինը: Դա  
մի երջանիկ մայր է, որ իր սիրաստուն եւ հրէշ-  
տակաղէմ փոքրիկի ձեռքից բռնած, նայում է  
ուրախ հայտնաջողով: Նրա մարմարի պէս սպի-  
տակ վիզը զարդարուած է ճերմակ մարգարիտ-  
ների շարանով:

Գեղեցկութեան մի այլ տիպար է սեղանի  
կենտրոնին կից բազմած օրիորդը, որ հպել է  
վառ կարմիր մետաքսէ, մինչեւ ուսերը բաց,  
մի նուրբ զգեստ: Նրա բանաստեղծական սի-

րուն դէմքի վրայ կարգում էք ե՛ւ ժպիտ, ե՛ւ  
ուրախութիւն, ե՛ւ սէր: Նա իր նուրբ մատնե-  
րով բռնել է մի թաւափայլ ծաղիկ, իսկ սպի-  
տակ վիզը զարդարուած է ճերմակ մարգարիտ-  
ներով:

Սեղանի միւս ծայրին նստած է մի այլ չըք-  
նադաղէմ օրիորդ, որի մօտ կանգնած երիտա-  
սարդն ապրում է սիրոյ ու երջանկութեան աշ-  
խարհում:

Աւ հասարակ, որմնակարում եւրոպացի  
դեղեցկուհիները գծուած են ա՛յնքան բնական,  
խօսուն եւ ա՛յնքան կենդանի, որ վկայում են  
նկարչի դէմքեր վրձիններու հարուստ յատկու-  
թիւնները: Այդ երևույթն էլ նշում է, որ նկա-  
րիչն իր շրջանում փայլել է որպէս վարպետ  
պօրտրէտիստ:

Որմնակարին առանձին կրանգ են տալիս  
նաեւ կանանց մինչեւ ուսերը բաց պարզ, բայց  
ուրոյն տարազները, որոնք իրենց գունազեղ ե-  
րանկներով եւ նուրբ գծապրուծեամբ ունեն  
ո՛չ միայն գեղարուեստական, այլ եւ ազգազը-

բական արժէք:

Նկարում ժպտում է նաև գեղեցիկ բնութիւնը: Կանանչ ծառերը եւ գունազոյգ ծաղիկները գծուած են ա՛յնքան բնական եւ կենդանի, որ ընդգծուած են նկարչի պէյզաժ նկարելու կարող վրձինը:

Արձանագրենք եւ այն, որ նկարիչը որմմանկարում տիպարները, բնութեան տեսարանները, ծաղիկները, պտուղները եւ իրերն այնպէս է դասաւորել, որ զիտողի աչքից ո՛չ մի երեւոյթ չի վրիպում: Սակայն, դա միայն որմմանակար չէ, այլ մի գեղեցիկ բանաստեղծութիւն, որի մէջ ցոյանում են նկարչի դիտելու, ըմբռնելու եւ գեղարուեստօրէն արտայայտելու տաղանդի էական յատկանիւնները: Այս որմմանակարը կարելի է նկարչի գլուխ-գործոց ըստեղծագործութիւններից մին համարել եւ որրկարող է նկարչական ամէն մի լուսագոյն թան-

գարանի գարզը կազմել:

Երաժշտութիւն: Արեւելեան երաժշտութիւն, քնարական բանաստեղծութիւն եւ նկարչական նուրբ արուեստ — ահա այն հիմնական գծերը, որոնք տարբեր երանգներով ներգաշնակել են միմեանց եւ կերտել սեֆէլիան արուեստի մի սրանւելի պատկեր: Դա իրանցի երկու երջանիկ երաժշտագէտների կեանքի մի ցայտուն նկարն է: Նրանք ծայպատիկ նստե՛ն են իրար կից, փափուկ մարդազաննի վրայ ծանոթի մօտ, եւ ապրում են արեւելեան երաժշտութիւնի գունեղ երանգների աշխարհում: Նորանցից մէկն արտայայտիչ աչքերով եւ նուրբ իրանով մի շքնաղ իրանուհի է, որ սպիտակ նուրբ մատներով նուագում է դայիրէն: Միւսն իրանցի երիտասարդ արնզահարն է, որ իր սիրատուր սիրտը դրել է սրինգի մէջ եւ բարակ շրթներով հնչեցնում արեւելեան երաժշտու-



Երաժշտութիւն

Նար-Ջուզայի արմատկարներից, 17րդ դար

թիւեր: Նրա պարզ տարազի դարձր կայմում է գունադեղ նուրբ գօտին: Գլխաւորապէս իշխում են դեղին եւ մուգ սրճադոյն երանդները: Պատր, տարաբախտաբար, ճեղքուել է եւ գեղարուեստական նկարը մէջտեղից կիսուել:

Եւրոպացի կիներ:— Կարմիր վարդի կոկոնը նօրբ մատներով բռնած, հանդարտ քայլում է կանանց մարդադեմնում: Նրա շէկ մազերը հանդարտ իջել են դէպի մարմարի պէս սպիտակ բաց ուսերը: Վիզը զարդարուած է սպիտակ մարգարիտների շարմնով: Իսկ կրծքի վրայ աստղի պէս ժպտում է կարմիր վարդի կոկոնը: Ձախ ձեռքով քեջուլթեամբ բռնել է իր քղանցքը: Մօտից վազում է սիրուն շնիկը: Տիրապետող երանգը մուգ-կարմիրն է:

Նոր-Ջուլգայեցի կիներ եւ հայ խօջան:— Կանանց պարտիզում, իր տիպիկ տարազով, կանգ-

նել է Նոր-Ջուլգայեցի կիներ: Պօջայական դեր-զատանից մի Հայունհի է զա, որի գլխաշորի երկու կողմերը, վիզը եւ կուրծքը զարդարուած են իրանական ոսկիների շարաններով: Նա կարմիր վարդը քեջուլթեամբ մատուցում է իր մօտ կանդան Պօջային, որ գլխին դրել է մի թաղիբէ դլխարկ, իսկ ձեռին ունի մի փոքրիկ գաւապան: Քիչ հեռու երեւում են չինարի ծառերը:

Սիրահարների երջանկութիւնը:— Դրանք երկու երջանիկ սիրահարներ են, երկու արեւելեան կենդանի տիպաբներ: Երիտասարդը ձախ ձեռքը դրել է չքնաղ իրանուհու ուսին, իսկ սիրուհին աջ ձեռքը քեջուլթեամբ հպել է սիրածի աջ ձեռքին եւ ձախով կանանց մարդադեմնին յինել է դիմու երկարաձիգ փոքրիկ սափորը: Սպիտակ մարգարիտները փայլում են



Սիրահարների երջանկութիւնը

Նոր-Ջուլգայի որմնակարներից, 17րդ դար

նրա վրի շուրջը: Նա ծաղկաւուն տարազով  
ծածկուած աջ ոտը դրել է սիրածի ոտի վրայ:  
Նկարում իշխում են՝ անասնման ուրախու-  
թիւն, քնքութիւն եւ երջանկութիւն: Տիրա-  
պետում են մուգ-կարմիր եւ բաց - դեղին ե-  
րանչները:

Սրանք են ահա Մրդ դարի սեփնջիկան պատ-  
մաշրջանում իր դարգացման որոշ բարձրու-  
թեան հասած նկարչական արուեստի թանկա-  
զին մնացորդները, որոնց մէջ տեսնում էք նոյն  
մտմանակի հայ նկարչինքից մէկի, եւ թերեւս  
վարպետ Մինասի, մշակուած, նուրբ եւ  
բարձր արուեստը, նրա հմուտ ու  
ձեւակերպուած վրձինը, որ երեք դար առաջ  
փայլել է Ապահանում եւ Նոր-Ջուղայում: Մի  
արուեստագէտ, որ ասոնձնապէս աչքի է ըն-  
կել որպէս վարպետ դիմանկարիչ, պէյզաժիստ,  
ժանրիստ եւ մանրանկարիչ: Նա թողել է որմ-  
նանկարչական արուեստի այնպիսի մնայուն է-  
ջեր, որոնք իրենց ոճով ու բովանդակութեամբ  
ո՛չ միայն ինքնատիպ են, այլ եւ մի-մի արժէ-  
զատոր փաւերազրեք են եւ այսօր ցայտուն դա-  
ւանում ապրող հայ խօջանների, իրանցի իշխա-  
նական տիպերի, ինչպէս նաեւ եւրոպական ոչ մ-

քերի, նրանց քնարական ապրումների, հոգե-  
բանութեան, անհետացած ուրախ կենցաղի, սո-  
վորութիւնների եւ տարալի մասին: Այդ կական  
կրեւոյթներն էլ դժուած են արուեստագէտի  
ա՛յնպիսի վարպետ վրձինով ղոյնների եւ զծերի  
ա՛յնպիսի սքանչելի ներդաշնակութեամբ, որ  
զուք այնտեղ տեսնում էք արտայայտութեան  
ոչ միայն պարզութիւն եւ խորութիւն, այլ եւ  
քնքութիւն ու մեղմութիւն, երեսոյթներ, ու-  
րոնք ընդզծում են պատմաշրջանի տաղանդաւոր  
հայ նկարչի պայծառ դիմագիծը: Եւ ո՛րքան  
խորանում էք այդ որմնանկարների մէջ, նոյն-  
քան էլ պոյում նրանց զեղարուեստական խոշոր  
արժէքը:

Առ հասարակ, Նոր-Ջուղայի Գաւրժ Թա-  
ղում բաղձած պատմական ապարանքի նկարա-  
պարզ առաջին սենեակը Մրդ դարի իրանեան  
որմնանկարչական արուեստը պատկերող փոք-  
րիկ, բայց հոյակապ մի թանգարան է, ստեղ-  
ծագործուած սեփնջիկան զեղարուեստի նուրբ  
չնչով ու խորութեամբ, որը կարող է պատիւ  
բերել ամէն մի զեղարուեստասէր ժողովրդի:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

20 Նոյեմբեր 1938, Նոր-Ջուղայ

